Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Հակոբ Արշակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ֆրանսիայի Հանրապետության ք. Փարիզ, 2019թ. մայիսի 16-18-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (UGAB) և Հայկական Միջմասնագիտական Միջազգային Խմբավորում (G2iA)**:**

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն 4-րդ միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսին (VivaTech 2019):

6. **Քննարկված թեմաները.**

2019թ. մայիսի 16-ից 18-ը Ֆրանսիայի Հանրապետության ք. Փարիզում կայացել է VivaTech 2019 միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսը, որին մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի գլխավորած պատվիրակությունը:

Հայաստանն՝ իր առանձին «Ոգեշնչող Հայաստան» թեմատիկ տաղավարով հանդես է եկել մի շարք երկրների կողքին: Հայաստանյան HyeTech, StartDoon, Grant Thornton և այլ ընկերություններ հնարավորություն ունեցան ներկայացնել իրենց ձեռքբերումներն ու

տեսլականներն այնպիսի ընկերությունների հարևանությամբ, ինչպիսիք են Google-ը, Microsoft-ը, IBM-ը, Facebook-ը, Amazon-ը, Dell-ը, AT&T-ն, CISCO-ն, Huawei-ը, Orange-ը և այլն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

«VivaTech 2019» միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսի շրջանակներում նախարար Հակոբ Արշակյանը հանդիպում է ունեցել «Աթոս» (Atos) ծրագրային ապահովում իրականացնող ընկերության առևտրային գծով տնօրեն, ընկերության փոխնախագահ Ռոբերտ Վասոյանի հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաև Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանը:

Հակոբ Արշակյանը «Աթոս» ընկերության փոխնախագահին ներկայացրել է տեխնոլոգիական ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած պետական քաղաքականությունը, այդ ուղղությամբ իրականացվող քայլերը:

Ռոբերտ Վասոյանն իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել Հայաստանին՝ զարգացնելու բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը: Ռ. Վասոյանը ցանկություն հայտնեց այցելել Հայաստան և շրջայց ունենալ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Ինժեներական քաղաք և ավելի մանրամասն ծանոթանալ տեխնոլոգիական արդյունաբերության առավելություններին և խնդիրներին:

Այցի շրջանակներում նախարար Արշակյանը հանդիպում է ունեցել նաև International Transport Forum-ի (ITF) գլխավոր քարտուղար Յոնգ Թե Կիմի հետ և քննարկել են ստորագրված խարտիայի շրջանակներում Հայաստանյան կողմի պարտավորությունների կատարման խնդիրները: Հայաստանը պարտավորվում է կառուցել ուսումնական կենտրոն, որը որակավորման վկայականներ կտրամադրի վարորդներին: Պարտավորությունների ցանկի մեջ են նաև տարեկան համաժողովներին պատշաճ մասնակցությունը, որը Հայաստանը չի կատարում: ITF-ի գլխավոր քարտուղարի հետ քննարկվել է նաև անդամ-երկրների միջև համագործակցության ակտիվացման կարևորության հարցը: Գլխավոր քարտուղարը փոխանցեց այս տարվա համաժողովի հրավերը:

Viva Tech-ի շրջանակներում հանդիպում է տեղի ունեցել IBM ընկերության տարածաշրջանային գլխավոր մենեջեր Սիլվանո Սանսոյի հետ:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հստակ քայլեր ձեռնարկել համատեղ կրթական և գիտահետազոտական ծրագիր իրականացնելու, ինժեներական համակարգերի մասնագետներին վերապատրաստելու, IBM ընկերությունում մասնագիտական պրակտիկա և աքսելերացիոն ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Նշվեց, որ IBM ընկերության հետ համագործակցության հնարավորությունները բավակին լայն են:

Հանդիպում է տեղի ունեցել Արաբական Միացյալ Էմիրությունների Արհեստական բանականության նախարար Օմար Բին Սուլթան ալ Օլամանի հետ, ով բավականին հետաքրքված էր երկու երկրների միջև հնարավոր համագործակցությամբ, հատկապես ալգորիթմների, մաթեմատիկայի, գիտահետազոտությունների, ինչպես նաև արհեստական բանականության ոլորտներում: Նախարար Հակոբ Արշակյանը համաձայնություն ձեռք բերեց տրամադրել արհեստական բանականության ուղղությամբ համագործակցության նախագիծ, որտեղ կարտացոլվի գիտահետազոտական և մասնագիտական կարողությունները:

Տեղի է ունեցել նաև հանդիպում Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս տարածաշրջանի փոխնախագահ Ժերոմի Շարտիեյի հետ: Ֆրանսիական կողմն իր հետաքրքրությունը հայտնեց հայկական ստարտափների, աքսելերատ ծրագրերի և հետազոտությունների ուղղությամբ: Ֆրանսիական կողմն առաջարկեց հայկական ստարթափներին ներառել իրենց կողմից ստեղծված ֆոնդերի և ֆինանսավորվող նախագծերի մեջ: Առաջարկվեց Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս տարածաշրջանում հիմնել հայկական ստարտափներ, որոնք կմասնակցեն ակսելերատ ծրագրերին, կվերապատրաստվեն և ակտիվ համագործակցություն կիրականացնեն ֆրանսիական ընկերությունների հետ:

Այցի շրջանակներում Հակոբ Արշակյանը հանդիպում է ունեցել Amazon Web Services գլխավոր մենեջեր Կամերոն Բրուկսի հետ և քննարկվել են Amazon-ի հետ տվյալների կենտրոնի կառուցման գործում Հայաստանին աջակցելու հնարավորությունները, ստարտափների փոխանակման և զարգացման ծրագրեր իրականացման հետ կապված հարցեր:

Հ. Արշակյանի հաջորդ հանդիպումը «Ալան» ընկերության հիմնադիր Ժան-Շառլ Սամուելյանի հետ էր: «Ալան» ընկերությունը, որի հիմնադիրն ազգությամբ հայ է, աշխատում է տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի տարբեր ուղղություններով: Մասնավորապես, ընկերությունը ծառայություններ է մատուցում առողջապահության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում նորարարական լուծումների, ծրագրային ապահովման

աուդիտի: Քննարկվեց համագործակցությունն առողջապահական ոլորտում՝ արդյունաբերական նորագույն լուծումներ առաջարկելու ուղղությամբ: Հետաքրքրված լինելով Հայաստանի հետ համագործակցություն իրականացնելու հնարավորություններով, «Ալան» ընկերությունը ցանկություն է հայտնել Հայաստանում բացել մասնաճյուղ:

Հանդիպման ավարտին Հակոբ Արշակյանը «Ալան» ընկերության ներկայացուցիչներին հրավիրել է մասնակցելու 2019թ. հոկտեմբերի 6-9-ը Հայաստանում անցկացվող Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովին (WCIT-2019):

8. Ակնկալվող արդյունքները.

Նախարարական մակարդակով մասնակցությունն այս խոշոր միջոցառմանը հնարավորություն տվեց Հայաստանի Հանրապետությանը ներկայանալ ոլորտը վերահսկող միջազգային հսկաներին՝ նորարարական մտքերով ու յուրօրինակ մոտեցումներով, գիտության, կրթության, գործարարության, տնտեսության ու էկոհամակարգերի զարգացման ուղղությամբ:

Նման մասշտաբի միջոցառման շրջանակներում սեփական տաղավարով հանդես գալը թույլ տվեց գրավել այնպիսի լրատվամիջոցների լսարանի ուշադրությունը, ինչպիսիք են CNN-ը, CNBC-ն, Euronews-ը, The New York Times-ը, The Walstreet Journal-ը, The Washington Post-ը, YouTube-ը և այլն: Նախարարի մասնակցությունը VivaTech 2019-ին թույլ տվեց ոլորտի մեծ թվով բարձրաստիճան ներկայացուցիչների անհատապես հրավիրել 2019թ. հոկտեմբերի 6-ից 9-ը ք. Երևանում կայանալիք «WCIT-2019» համաժողովին, ինչը զգալիորեն կմեծացնի միջոցառման արդյունավետության մակարդակը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան 21.05.2019թ.